

զմտաւ ամ՝ թէ և այլքն որչափ ինչ գործեցին»։ Բրա. մրկ.:

Ռոշքեան նոյն այդ լաստիւքը կը ներկայացնէ այսպէս.

ԼԱՍՏԵՄ. եց, եցի, լաստ առնեմ, յատկապէս պատրաստեմ, կարգեմ, preparo, as. Երեմ. 9. « Կառօք և երկվարօք ճակատեցի, լաստեցի իբրև զհուր ի պատերազմ ի վերայ քո »: Ոսկ. ՅՏ. Ա. « Որոյ աւետարանն գաշխարհս ամենայն լատեաց »:

Երկուքին մօտ ալ նշանակութիւնը նոյն է և հիմնուած նախնեաց միեւնոյն վկայութեանց վրայ: Սակայն հարցը այս չէ. լաստնի բառին նշանակութիւնն է որ կը տարբերի: Կը թուի թէ Ռոշքեան մտքի ուստում մը կ'ընէ լաստ-էն լաստենի-ն հանելու: Թէեւ գործածուած է Ռոշքեանէն յիշատակուած գրքի մը մէջ որ է Աշխ (?), սակայն կը մնայ տարակուսական՝ թէ իրապէս այդ բառը ատանկ է նշանակելու ծառը, որմէ լաստը շինուի: Հայերէնի մէջ ևնի վերջացող ծառերու անունները կը նշանակեն այն ծառերը, որոնց պտուղը արմատն է բառին. այսպէս տանձ-տանձենի, ինձոր-ինձորենի, մոր-մորենի, եւն: Արդ լաստենի-ի պտուղ կրնայ համարուիլ լաստը: Այս անճիշտ երեւոյթն է որ ՆՃԲ-ի հեղինակները մղած է տալ անոր ճշտագոյն բացատրութիւն մը, նկատելով լաստենի-ն պարզապէս որպէս փայտ կամ տախտակ՝ որմէ կը պատրաստուի լաստը: Ու այսքան:

Լեզուաբանական և ստուգաբանական տեսակէտով արժէք մը չունի Ստ. Մալխասեան՝ եթէ Լատտենին կը համարի « ցարասիներու կարգին պատկանող ծառ մը, գորշ կեղեւով, կարծր զեղնագոյն, հիւսնութեան և ճախարակագործութեան և լաստեր շինելու յարմար փայտով. կոթնաւոր, կլորկեկ, բթածայր, անհասարատ ատամներով տերեւներով, մենատուն

կատուիկներով » (Alnus glutinosa): Ստ. Մալխասեանց չ'արդարացներ իր բացատրութիւնը ոչ մէկ վկայութեամբ, ինչպէս առ հասարակ իր միւս բառերու շարքը:

* * *

Երկրորդ բառը, զոր ՆՃԲ-ը կ'առնէ Ռոշքեանէ, (անդրադարձուած միայն մեր համեմատած սիւնակներու մէջ) է ԼԱՏՐԱՏԵՆ, որուն արմատը լատիներէն latro-էն կը դնեն երկուքն ալ և նշանակութիւնն ալ՝ հաջել: Բերուած վկայութիւնը նոյն է երկուքին քով եւս: Բայց մինչ Ռոշքեան կը դնէ Յակ. Ճառ. ԺԳ., ՆՃԲ-ը՝ ՄԾԲ. ԺԳ.: Այս տարբերութիւնը դիւրաւ կարելի է բացատրել:

Երկուքին ալ ակնարկած գործը նոյնն է, այսինքն « Զգօն » զիրքը Ս. Յակոբ Մծբնայ հայրապետին, հայերէնի թարգմանուած ատրերէնէ: Մին՝ հեղինակին անունը կը գործածէ, միւսը՝ քաղերն:

Սակայն գարմանալին և դժուարին հարցը այն է՝ որ ինչպէս այդ գործին մէջ լատրատել բայը՝ « հաջել » նշանակութեամբ՝ կրնայ գոյութիւն ունենալ: Հաւանաբար, ինչպէս դիտել կու տայ Հ. Մկ. Աւգերեան ՆՃԲ-ի Յառաջարանին մէջ, ձեռագիրը յետին դարերուն աղաւաղուած է ռամկական բառերու ներմուծումով, և կը յուսայ որ օր մը կարելի ըլլայ անոր լաւագոյն ձեռագիրը գտնել: Այդ բառին հին կամ նորամուտ ըլլալու պարագան լուծելու համար անհրաժեշտ է այդ ցանկալի գիտը:

Աճառեան այս մեր կասկածը հեզմանքով մը աւելի եւս կը շեշտէ: Ու բացարձակապէս կը ժխտէ Լատրատել բային latro-էն առաջ եկած ըլլալու կարելիութիւնը: Կասկածը կը սկսի Հիբերմանով (Armenische studien, Լայպցիկ, 1883), որ տարակուսելով հանդերձ՝ կը համարի որ տարակուսելով հանդերձ՝ կը համարի զայն առաջ եկած latro-էն: Աւելի հիմնական է քննութիւնը Պրօքէլմանի (Lexicon

Syriacum, Պերլին 1895) կը « Ուսումն փոխառեալ բառից », գործին մէջ (էջ 115, ինչպէս կը նշանակէ Աճառեան) որ կը համարի թէ հայերէն ԱՏԵՆ բայով շինուած բառախաղ մըն է, և կամ կրկնութեամբ ուժեղացած, նշանակելով ուժգին ատել, կամ բամբասել: Աճառեան համաձայն է այս մեկնութեան և եզրակացնելով կ'աւելցնէ. 1) Հայերէն լատրատել չի նշանակում հաջել, և ՆՃԲ միայն հնարած է այսպիսի իմաստ ըստ լատիներէնի: 2)

Չեւով նման չէ լատինականին: 3) Մծբնացին չէր կարող ընաւ ունենալ լատինական փոխառեալ մի բառ:

Աճառեանի վճռական եզրակացութիւնը այն ատեն միայն կրնայ ուղիղ համարուիլ, եթէ բայը ըլլար ԱՏԱՏԵՆ կամ ԱՏՐԱՏԵՆ, առանց լատինի: Հարցը կը լուծուի՝ երբ լաւագոյն օրինակ մը երեւան գայ, ինչպէս ըսինք: 1824-ին Պոլիս հրատարակուած « Զգօնը » բաւարար չէ:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ

(Շարունակելի)

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԶԻ ԽՃԱՆԿԱՐԸ Ս. ՍՈՓԻԱՅԻ ՄԷՉ

Վերջերս Բագմալէպը հրատարակեց (1) հանգուցեալ Գեր. Հ. Յովհան վրդ. Աւգերի մէկ աշխատասիրութիւնը, ուր յարդեի Հայրը կրկին սեղանի վրայ կը դնէր Ս. Սոփիայի մէջ զանուկ Ս. Գրիգոր Լուսաւորչի խճանկարին շինութեան թուականը:

Ասկէ առաջ, Հ. Վարդան վրդ. Հացունի՝ Բագմալէպին մէջ (2) կարծ ուսումնասիրութեամբ մը քննած էր այս խնդիրը և տարագի ձեւերէն առաջնորդուելով՝ եկած էր այն եզրակացութեան թէ այդ խճանկարը Ժ. դարու գործ պէտք էր ըլլար:

Հ. Յովհան վրդ. Աւգեր իր գրութեամբը կ'աշխատի ջրել նախապէս յայտնուած կարծիքը, և պատմական փաստեր առաջ բերելով կը ջանայ հաստատել թէ այդ խճանկարը Զ. դարու գործ է:

Հ. Յովհան վրդ. Աւգերի փաստարկութիւնը թերեւս համոզիչ ըլլար, եթէ անոնց կառուցման խարխիւր պատմական նկատելի սխալներ չունենար:

Արդարեւ՝ Հ. Յովհան վրդ. Աւգեր կը գրէ.

Ա) « Բարոյական զգացման տեսակէտով կարելի չէ ընդունիլ որ Վասիլ կայսեր ժամանակ, ևրբ արդէն հայոց և յոյներուն միջև անջատման խոր ակօս մը բացուած էր չորս դարերէ ի վեր փոխադարձ ատելութեամբ և հակառակութեան ոգին շարունակ արծարծելով, Բիւզանդացիք լատրոյն հոգեկան տրամադրութիւն մը ուսուցոյն հայոց հանդէպ քան Յուստիանենային հայոց հանդէպ քան Յուստիանոսի ժամանակ, ևրբ տակաւին դահալից կը բողբէր Թեոտարայի պէս իմաստուն, արիախիտ հայազգի կայսրուհին (3), կայսեր հողոյն մէջ ներշնչող ամէն վսեմական և զերպանց ձեռնարկներու և զաղափարներու... »: Հոս՝ Հ. Յովհան վրդ. Աւգեր կ'ընէ իր առաջին սխալը: Յուստիանոսի կիներ, Թէոտորա կայսրուհին, որ ձիարձակարանի արջերու պահակներն աղջիկն էր և պարուհի ձիարձա-

(1) « Բագմալէպ » 1955, թիւ 4-5 և 6-7:
(2) « Բագմալէպ » 1941, թիւ 1, էջ 13: 1943, թիւ 1-6, էջ 35:
(3) Ընդգծուածը ինծմէ:

կարանի ներկայացումներուն մէջ, ըստ Պրոկոպիոս պատմագրին՝ հայ չէր, այլ սիւրիացի:

Իրաւ է՝ Թէոտորա անունով հայազգի կայսրուհի մը եղած է, բայց Թ. դարուն (842-867), Թէոփիլոս կայսեր կինը՝ Մամիկոնեան գերդաստանէն: Այս հայազգի Թէոտորա կայսրուհին է որ բիւզանդական եկեղեցին սրբացուց, պատկերապաշտութիւնը վերահաստատելուն համար:

Ուրեմն սխալ է այս երկու Թէոտորաները, երկու հարիւր տարուան ժամանակաշրջանով մը իրարմէ բաժնուած, իրարու հետ շփոթելը:

Բ) Հ. Յովհան վրդ. Աւզեր խօսելով Վասիլ կայսեր ժամանակ(4) յոյն եւ հայ եկեղեցիներու անջատման «խոր ակօս»ին մասին, բոլորովին կը մոռնայ Սարգիս Սեւանցիի (992-1019) եւ մանաւանդ Պետրոս Գետադարձ (1019-1058) կաթողիկոսներու աստուածաբանական եւ քաղաքական սիրաբանութիւնները Վասիլ Բ. կայսեր հետ: Եթէ չեմ սխալիր, Վասիլ Բ. անաջ կատարուած հրաշքի մը առիթովն է որ Պետրոս կաթողիկոս կոչուեցաւ «Գետադարձ»: Ուրեմն՝ հոգեկան տրամադրութիւնները, երկու եկեղեցիներուն միջեւ ամէնէն ձեռնտուն էր Վասիլ Բ. ի օրով, լայնախոհութեան:

Բիւզանդական եկեղեցին եւ կայսրը հայոց կը ժպտէին եւ հազար սիրունութիւններ կ'ընէին քաղաքական նկատումներով: Բիւզանդական այս քաղաքականութիւնը շուտով իր պտուղները տուաւ, երբ՝ իրարու ետեւէ՝ հայ իշխաններն ու թագաւորները սկսան իրենց բնաշխարհը Բիւզանդացու ձգելով, դալ կայսրութեան մէջ դառնալ հասարակ աւատապետներ:

Յրանսայի թագաւորներէն Հենրիկոս Գ. նշանաւոր խօսք մը ունի. «Փարիզը՝ պատարագ մը կ'արժէ»: Չեմ կարծեր թէ Վասիլ Բ. ալ այլապէս խորհած ըլլայ:

«Հայաստանը՝ Ս. Սոփիայի մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորչի մէկ խճանկարը կ'արժէ»:

Հաստատապէս կ'երեւի թէ Հ. Յովհան վրդ. Աւզեր տեղեկութիւն չէ ունեցած ուրիշ որմանկարի մը մասին որ կը ներկայացնէ Ս. Գրիգոր Լուսաւորչի, բիւզանդական ուրիշ եկեղեցիի մը մէջ, Ս. Սոփիայի տարազով: Այդ եկեղեցին է Միստրայի (Պեղոպոնէս) Աֆէնթիքոյ եկեղեցին, որուն խորանին որմին վրայ է ԺԳ. դարէն Ս. Գրիգորի որմանկարը: Այսինքն թէ Վասիլ Բ. ան չորս հարիւր տարի վերջ տակաւին բիւզանդական եկեղեցին կը նկարէ եւ կը ներկայացնէ հայ սուրբը:

Բայց չէ՞ որ Ս. Գրիգոր Լուսաւորիչ քրիստոնէական եկեղեցուց հայրերէն մէկն է, եւ աւելին՝ ձեռնադրուած Կեսարիոյ մէջ, Բիւզանդական եկեղեցիի կղերէն: Ինչո՞ւ դարմանալի գտնել որ անոր նկարը գտնուի բիւզանդական եկեղեցիի մը մէջ: Չէ՞ որ Մոսկուայի մէջ ալ, Սարսափելին Իվանի շինած եկեղեցիին մէջ ալ կայ մատուռ մը Ս. Գրիգոր Լուսաւորչի անուն(5):

Գ) Հ. Յովհան վրդ. Աւզեր յարմարապէս կ'երեւի թէ տեղեկութիւն չէ ունեցած Միջին դարու ճարտարապետական եւ Ուրմնագրական «դաս»ին (loge) կազմակերպութեան մասին:

Եթէ երբեք շրջան մը եղած է որ արհեստները եւ արհեստակցական միութիւնները ամենախիստ կանոններու ենթարկուած էին, ան ալ Միջին դարն է: Այս մասին երկար գրած եմ այլուր(6) եւ պէտք

(4) Խնդիրը կը վերաբերի Վասիլ Բ. կայսեր, Ժ. դար (969-1025):

(5) Սարսափելի Իվան, Մոսկուայի մէջ շինած իր մայր եկեղեցին գարգարեց մատուռներով, որոնք ձօնուած են այն սուրբերուն՝ որոնց տօնական օրերուն կը հանդիպէր թաթարներուն վրայ տարած իր յաղթանակները:

(6) Ամսագիր Աճի, 1952, քիւ 6-7, «Տրդատ՝ ճարտարապետ հայոց»: Աճի, 1949, թիւ 3, «Վերադարձը հայկ. ճարտարապետութեան մէջ»:

չկայ կրկին անդրադառնալու մանրամասնորէն այս խնդրոյն վրայ: Միայն այսքանը բւժնէ՝ թէ Միջին դարուն եւ ա'լ աւելի առաջ, Հոռոմէական շրջանին, աւելի առաջ՝ արեւելքի մէջ, որմնագիրները ենթակայ էին մասնաւոր կանոնադրութեան մը: Նոյն բանն էր Բիւզանդիոնի եւ Հայաստանի մէջ: Եւ պէտք չէ կարծել՝ թէ հասնողը՝ այժմ եղածին պէս՝ «պատահական անցորդը» կրնար միջամուխ ըլլալ շինութեան մը մէջ, անոր ճարտարապետական կերտուածքին մասին կարծիք յայտնել ու խորհուրդներ տալ կայսերական ճարտարապետներու:

Միջին դարուն, ինչպէս բացառած եմ, մայր եկեղեցիները կը շինուէին երկրին որմնագրական դասին «մեծ վարպետ»ին կողմէ: Բնական է անոր կ'անջակցէին միւս «վարպետ»ները:

Տրդատ՝ Անիի մէջ սկսած էր շինել, Սմբատ Բ. ի հրամանովը, Անիի Մայր եկեղեցին, 989ին: Այս կը նշանակէ թէ ան արդէն Հայաստանի որմնագրական դասին մեծ-վարպետն էր: Արդ՝ Բիւզանդիոնի, Հայաստանի եւ Սիւրբոյ որմնագրական գանազան դասերը կը կազմէին ամբողջութիւն մը, ընդհանուր «արեւելեան դաս» մը: Եւ պատիւ է մեզի համար ըսել՝ թէ այդ թուականներուն, Տրդատ՝ արեւելեան դասին ալ մեծ-վարպետն էր (փրօթօմէսթրօ): Եւ ասոր համար է որ ձգելով Անին, 989ին, եկաւ Բիւզանդիոն, Ս. Սոփիայի քանդուած դմբէթը վերաշինելու: Տրդատ՝ Անիի մէջ գործ ունէր եւ անդործի մը պէս՝ ձեռքերը գրպանը՝ Բիւզանդիոնի մայթերուն վրայ չէր պտտէր պատահարար:

Միջանկեալ ըսեմ թէ Ս. Սոփիայի այսօրուան դմբէթը մեր Տրդատին գործն է, որ մօտ հազար տարիէ ի վեր կը ճանաչուէ արեւուն տակ: Յաւալի է նկատել թէ օտար հեղինակները ցարդ կը նկատեն այս դմբէթը՝ Անիի միւսի գործը:

ԲԱԶՄԱՎԷՊ

Լուի Պրէհիէ Բիւզանդագետը՝ Տրդատը կը դասէ բիւզանդացի արուեստագէտներուն կարգը, ինչ որ կը նշանակէ թէ փրօթօմէսթրօ Տրդատը այնքան բիւզանդացի ճարտարապետ էր՝ որքան հայ:

Դ) Ուրիշ կէտ մըն ալ կայ որ կը վրիպի Հ. Յովհան վրդ. Աւզերի նկատողութեան: Բնական է եթէ տեղեկ ըլլար շինելու արուեստի կանոններուն, թերեւս նշկատի առնէր այդ կէտը: Արդարեւ՝ կարելի է Ս. Սոփիայի դմբէթին պէս գրմբէթ մը շինել՝ առանց դմբէթին տակի որմը, թմբուկը ի նորոյ շինելու եւ բուն դմբէթին «գտակ»ին կապելու: Այս դմբէթին շինութեան ձեւը բացառած եմ այլուր(7): Սա ըսեմ միայն թէ Տրդատ գրմբէթը շինելու համար՝ ի նորոյ շինեց նաեւ անոր տակի պտտը:

Արդ, ո՞ւր կը գտնուի Ս. Գրիգոր Լուսաւորչի խճանկարը: Այդ պատին պատահաններու միջանկեալ որմի մը վրայ, որմ մը՝ զոր Տրդատ շինեց: Եղբակացիներու պէտք կը մնա՞յ այլեւս:

Ե) Հ. Յովհան վրդ. Աւզեր դիւրաւ կը շփոթէ Վասիլները, թուականները եւ պատմական իրողարձութիւնները, եւ կը գրէ.

«Այս Վասիլ Բ. ի ժամանակ վերաշինութեան մասին խօսելով նաեւ Վարդան (Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, 1862) կը գրէ այսպէս՝ - Դարձեալ ի նոյն կայսեր Վասիլէ եկն ներքինի մի նեկիտ կոչեցեալ՝ յերեք հարիւր քսան եւ հինգ թուին, խնդրել ի յԱշոտոյ թագ...»

..... Աշոտ ընդ նմա առաքէ եւ տաս հազար արծաթ ընծայ նորաչէն եկեղեցուոյն, որպէս Մամիկոնեանքն՝ հինգ զրիւ արծաթոյ, ասեւն գնեալ դրոուն արեւմը-

(7) Ամսագիր Աճի, 1952, «Տրդատ՝ ճարտարապետ հայոց»:



